

պի մէջ, պատերազմի շրջանին: Անոնք որ միջոցը գտած էին իրենց սիրելիներու մարմինները Ազիզիյէ թաղելու, անոնց վրայ հետագային քարէ կամ փայտէ խաչ մը, նշան մը կրցին գնել, համառօտ արձանագրութեամբ մը: Իսկ մեծագոյն մասը անջատ անջատ, կամ տասնեակներով, փոխադրուեցան Շէյխ Մագսուտ, այնպէս որ 1927ին երբ Ազիզիյէի գերեզմանատները փակուեցան, և Շէյխ Մագսուտի ընդարձակ արտերը տրամադրուեցան, համեմատական վճարումովը քրիստոնեայ հասարակութեանց, Հայոց յատկացուած մասը կիսովին լեցուած էր արգէն: Այդ արտերը ամբողջովին վազձն էին Շէյխ Մագսուտի Իսլամ գիւրեքին, որմէ գնեցին հասարակութիւնք իրենց բաժինները, Քաղաքապետարանի ցոյց տուած գնահատումով: Այժմ, քաղաքին այդ մասը, բաւական վայելուչ տեսարան մը կը պարզէ, թէ և ցարդ առանց բարձրացած ծառերու, բայց շատ աւելի ներկայանալի քան Ազիզիյէի գերեզմանատները:

Ամէն շրջան իրեն յատուկ ճարտարպետական ոճը ունի, ո՛չ միայն եկեղեցոյ, զպրոցի, պալատի, կամուրջի, տան, և այլն շինութեանց, այլ և տապանաքարերու համար: Սայիպէի նախնական գերեզմանատունը Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ ներսով ու դուրսով, կը բովանդակէ հարթ տապանաքարեր, հողին վրայ ուղղակի դրուած: Կան մաս մը տապանաքարեր որ պատին վրայ ամբարցուած են, տեղւոյ յարմարութեամբ: Իսկական տապանաքարերը Ազիզիյէի գերեզմանատան մէջ են, որոնք մեծագոյն մասով կը պահեն իրենց հայեցի դրոշմը, որ է զազաղաձեւ, երկար, քառանկիւն գիրքով: Անոնցմէ շատ քիչեր միայն կը կրեն տեղական, արաբական ոճ, ինչպէս են չուրջի դամբարանները:

1915 էն ասդին Ազիզիյէի հայկական տապանաքարերը աստիճանաբար ենթարկուած են տեղական ոճի, հաւանաբար անոր համար՝ որ քարերը ընտրողները, կոփողներն ու գրողները տեղացի արաբներ են եղած: Այս գրութիւնը կը շարու-

նակուի մինչև այսօր, Շէյխ Մագսուտի նոր Ազգ. Գերեզմանատան մէջ եւս, ուր սակայն չեն պակսիր եւրոպական նուրբ ոճի դամբարաններ: Ասոնց մեծագոյն մասը կը գտնուի զէպի հարաւ ուղղութեան վրայ, հո՛ն ուր մասնաւոր ընտանեկան դամբարաններ կան, և հետզհետէ կը բազմանան, ընտիր կճեայ քարերով, ճերմակ ու գունաւոր մարմարներով, երկաթապատ ճոխ եղերքներով: Նորութիւն մըն է Հայոց համար տեսնել նաեւ ընտանեկան դամբարաններ, ստորերկեայ նկուղներով (cave):

Եթէ համեմատաբար բացատրութիւն նկատենք հարաւային մասը, Շէյխ Մագսուտի այս ընդարձակ հողվրտիքն ալ, սեէ կողմէն գիտած, կը ներկայացնէ տըխուր բացաստան մը, անկարգ, անկանոն գիրքերով խառն քարակոյտ մը, որ սակայն ժամանակի ընթացքին, հետզհետէ պիտի ձեւաւորուի, երբ տարիներէ ի վեր անկուած ծառեր տակաւ աճին և չուք ձգեն իրենց արմատներուն քով հանգչող մեռեալներուն:

Հայոց բաժինը որ մօտաւորապէս 37 հազար քառ. մէթր տարածութիւն մը ունի, կը գտնուի հարթ բաժնին մէջ, լայն ճանապարհին ձախ եղերքին վրայ, զէպի հարաւ: Ծամբուն աջ եղերքի գերեզմանատները, աստիճանական վերելք մը կը ներկայացնեն, և գիրքի տեսակէտով աւելի ներկայանալի են:

Ազգ. մեր Գերեզմանատան սահմաններն են արեւելքէն՝ Լատինաց գերեզմանատուն և թափուր վարելի արտ: Արեւմուտքէն՝ ճանապարհ, զբացնութեամբը Յունաց գերեզմանատան: Հիւսիսէն՝ միայն ճանապարհ, հարաւէն զա՛րձեալ ճամբայ, զբացնութեամբը Հայ Կաթոլիկ գերեզմանատան:

Մեր գերեզմանատան բաժնին առաջին կանխավճարը եղաւ 1923ին, 125 Օսմ. հնչուն ոսկի: 1927ին երկրորդ կանխավճարը լրացուելով, որ էր 180 Օսմ. հնչուն ոսկի, Քաղաքապետարանէն փոխանցուեցաւ քալիուն, ինչպէս եղաւ միւս հասարակութեանց, և Ազգ. Առաջնորդարանը աէր եղաւ իր բաժնին, իրր 35